'ի մեղայ մերոյ ոչ կատարեցաւ. ոմանք ասեն՝ թէ՝ Լ.Ա. ամ թագաւորեաց։

Ալէքս՝ որդի Մանիլի՝ թագաւորեաց ամս երկոտասան, և երկոտասան իշխանք՝ պահէին զնա։ Իսկ Անդրոնիկոս ոմն իշխան՝ որպէս թէ՝ ցաւակցաբար եկեալ և պահեալ զԱլէքս, դիպուկ ժամ գտեալ խեղդեաց զԱլէքս և զմայրն նորա, և ընկէց 'ի ծով, և ինքն թագաւորեաց, և էառ զկինն Ալէքսի մատաղ, և ինքն չարաձեր ամօք։ Յաւուրս սորա երեւեցաւ 'ի Կոստանդնուպոլիս արեղայ մի Հոռոմ, և զսատանայ իւրն Աստուած պաշտէր, և մի շուն շրջեցուցանէր զհետ իւր, և նմա մատուցանէր զաղօթս իւր. և բազումք խոտորեցան յաղանդն նորա, որպէս մայր թագաւորին՝ զմասն Կենաց Փայտին եդ 'ի ներքոյ կոշկաց թագաւորին. զոր իմացեալ թագաւորն՝ ընկէց զմայր իւր 'ի պատուոյն, և զաբեղայն այրեաց, և ԺԱ. այր և կին 'ի ծովն խեղդեաց։

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան